**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**
**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 26.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

| | | |
|---|---|---|
| 26.1. | **սեփականատիրոջ անվամբ առաջին անգամ հաշվառվող** ավտոմոբիլի, մոտոտրանսպորտային միջոցի, տրիցիկլի, քվադրիցիկլի, կցորդի (կիսակցորդի) **միայն** թվային հաշվառման վկայագիր տալու համար | բազային տուրքի ~~վեցապատիկի~~ **եռապատիկի** չափով |

»:

**Հոդված 2.** Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 1.1-ին, 1.2-րդ և 1.3-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

| | | |
|---|---|---|
| 1.1. | **որակավորման քննությունների դրական արդյունքների հիման վրա առաջին անգամ միայն** թվային վարորդական վկայական տալու ~~(թվային վարորդական վկայականը փոխանակելու)~~ համար | բազային տուրքի ~~տասներկուապատիկի~~ **վեցապատիկի** չափով |
| 1.2. | վարորդական իրավունքի վկայական ստանալու տեսական ~~և (կամ)~~ **կամ** գործնական քննություններին արտահերթ մասնակցելու համար | քննությունն առաջին անգամ դրական չհանձնելու դեպքում, քննության հաջորդ **աշխատանքային** օրը կրկին քննությանը մասնակցելու համար՝ բազային տուրքի քառասունհինգապատիկի, իսկ 3-րդ **աշխատանքային** օրը մասնակցելու համար՝ բազային տուրքի երեսնապատիկի չափով, ~~քննության~~ երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ~~անհաջող փորձի~~ **բացասական հանձնված քննության** դեպքում քննությանը հաջորդող 7-րդ **աշխատանքային** օրը քննությանը մասնակցելու համար՝ բազային տուրքի քառասունհինգապատիկի, իսկ ~~14-րդ օր~~ |

| | | |
|---|---|---|
| | | ~~անց~~ **14-րդ աշխատանքային օրը** մասնակցելու համար՝ բազային տուրքի երեսնապատիկի չափով |
| 1.3. | տրանսպորտային միջոցների պետական գրանցման-հաշվառման գործողության արդյունքում տպագրված փաստաթղթերը և (կամ) հաշվառման համարանիշներն առաքելու համար | բազային տուրքի հնգապատիկի չափով»: |

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի սեպտեմբերի 1-ից: